



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

74501
1600-9

ՄԱՏԵ - ԶՈՒԼԿԱ

**ՎԵՆԳՐԻԱՅԻ ԱՂԶԿԱ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Ռուսերենից թարգմ. ՍԻՄԱԿ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

10

8

ՄԱՏԵ - ԶՈՒԼԿԱ

44383
11

ՎԵՆԳՐԻԱՅԻ ԱՂԶԿԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսերենից քարգ. ՍԻՄԱԿ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929



Լույս է տեսնում Սոցդասգլխավարչության կից գործող Մանկա-
կան գրականության Հանձնաժողովի հավանությամբ:

№ 46

ՊԵՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 928

Պ. № 196

Տիրաժ 3.000

Գրառեպլար № 1706 ք.

ՎԵՆԳՐԻԱՅԻ ԱՂԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ժուժան աչքերը բաց արավ ու թրպրտաց, ինչպես վախեցած թռչնակ,—պալծառ լույսը կուրացնում եր աչքերը: Իսկույն ցած թողեց թերթերունքները:

Փորձեց մտածել աչքերը փակած:

Մտքերը գալիս էյին վոչ միանգամից, վոչ թե հաջորդաբար, այլ խառնիխուռն և ցրված. նրանք կախ էյին ընկնում մեկը մյուսից ու հանկարծ վազում էյին ուղեղում աֆսպես արագ, վոր Ժուժան չեր կարողանում տիրապետել, իմի հավաքել այդ մտքերը:

Թերթերունքների արանքից ներս էյին թափանցում ծիրանագույն կրակե ճառագայթները: Ժուժան տեսնում եր սենյակի սպիտակ պատերը:

«Ես վնդաբեկ եմ»—մտածեց Ժուժան և ահամա խոր հառաչեց:

Յերբ ողը ներս թափանցեց թոքերը, կողքը սուր ծակեց և ցավեց: Այդ ցավից Ժուժան մի անգամից հիշեց ամենինչ:

—Հը՛, զարթեցի՛ր, փոքրիկ բալշեիկ աղջիկ,—ասաց սենյակում մեկը:

Ժուժան պինդ փակեց իր թուխ աչքերը, ամուր սեղմեց թերթերունքները—այնպես վոր կնճռոտեց աչքերի շուրջը և շունչն իրեն պահեց: Ուժեղ լարումից միայն քթիկն եր նյարդախորեն ցնցվում:

Վոսնաձայն լսվեց: Մեկը, շորերը խշխշացնելով, բուրբուրով մոտեցավ մահճակալին: Սառն, անուշահոտությամբ ոծված մի ձեռք, դիպավ Ժուժայի դեմքին:

— Ճիշտ ե, զարթեց:

— Արդեն ժամանակ ե:

Ուրիշ մի աղամարդ և անծափով մի կին խոսակցում էին Ժուժայի գլխի վերևը: Կողքում և սրտում կրկին ցավ դադաց և կարծես սուր մուրճով խփեցին նրա քունքերին:

— Նա ուշքի չե լեկել, բայց համառում ե. տեսե՞ք՝ ինչպես ե սեղմում աչքերը և շունչն իրեն պահում:

— Լույսը խանգարում ե նրան:

— Հը՛, վոչինչ, վոչինչ, թող վերջնականապես ուշքի գա:

— Ի՛նչ համառն ե՛: Եսպես փոքրիկ, ու եսպես համառ:

— Յես կարծում եմ: Միթե դուք չեք լսել, թե ժանդարմի ձեռքն ինչպես ե կծել:

«Ձեռքը: Ժանդարմի.— Մտածում ե Ժուժան:

— «Այո, այո, ճիշտ ե, ճիշտ ե— փոթորկվում ե նրա գլխում:— Բա մայրիկն ուր ե: Ո՛ւր ե մայրիկը»:

— Մայրիկ— աղաղակեց Ժուժան, — մայրիկ— բայց նրա ձախը հնչում եր թույլ, հազիվ լսելի:

— Ապա, փոքրիկ աղջիկ, աչքերդ բաց արա, — կուսցավ նրա վրա մի կին:

Ժուժան աչքերը բաց արավ:

Կինը սպիտակ շոր եր հագել, սպիտակ գլխաշոր եր կապել, իսկ կրծքին վոսկե շրջանակի մեջ փալլում եր կարմիր խաչ: Ժուժան արագ, ուշադիր նայեց նրան և նրա թերթերունքները վախեցած թըռթռացին:

— Ես վճռեցի եմ—հարցրեց ցածրաձայն:

— Դու չպետք ե հուզվես և շատ խոսես: Հետո ամեն բան կիմանաս: Հանգստացիր:

«Դու» ասաց, ինչպես փոքրիկի,—մտածեց ժուժան:

— Յես հիվանդանոցում եմ: Իսկ մայրիկս...»:

Մոտեցավ մի տղամարդ: Նրա կզակին—փոքրիկ, բութրովին սպիտակ մազերի մի փունջ կար:

Վասկե շրջանակով ապակիների տակից փալլում ելին աչքերը:

«Բժիշկ ե»,—մտածեց ժուժան:—«Յես հիվանդանոցում եմ»:

Նա շարժվեց ու դրանից նորից կողքը ծակեց:

— Վա՛յ, վա՛յ...

Յերկուան ել կռացան նրա վրա:

— Վճռեցիք ե ցավում:

— Կողքս:

— Ե՛լ վճռեցիք:

— Վա՛յ, վա՛յ... ժուժան ուզում եր վռաքը շարժել, բայց սոսկալի ցավ զգաց:

— Վա՛յ—ա՛խ... վա՛յ...

— Ի՞նչդ ե ցավում:

— Վտաքս:

— Իսկ եստեղդ, ու կինը ձեռքը դրեց նրա ճակատին: ժուժան այժմ միշտ զգաց, վոր իր ամբողջ գլուխը փաթաթած ե:

— Իսկ եստեղդ:

— Եստեղ ել... բերանս այրվում ե ու շատ ե ցավում:

— Ի՞նչ որն են դցել չերեխին... եսպես փոքրիկ չերեխային ել եսպես ծեծել... փնթփնթում եր բժիշկը:

— Բայց դուք սխալվում եք, բժիշկ: Յես մի ականատեսից լսել եմ այդ դեպքի մասին. նա պատմում եր, վոր ես աղջիկը առյուծի պես եր կռվում:

— Ն'... Բնչ եք ասում: Գուցե կատվիկի պես, ծիծաղեց բժիշկը:

— Քանի տարեկան ես, փոքրիկ,—հարցրին նրանք ժողովին:

Ժողովան մի վայրկյան լռեց: Այժմ նա միանգամայն դիտակցության եր յեկել: Հիշեց ամեն ինչ: Պատասխանը մի քիչ ուշացրեց: Նրա աչքերում պայծառ խելքն ու զգուշութունը շողաց: Հետո ասաց.

— Տասնուչորս:

«Ես կարելի յե ասել,—մտածեց նա,—ես կարելի յե ասել: Սրանով վոչ մի ավելորդ բան չեմ ասում»:

Նա շատ եր ուզում լաց լինել: Այն միջոցին յերբ նա մտածում եր, թե լաց չի լինիլ, արցունքներն արդեն թափվում եյին—իրենք իրենց:

— Տեսնում եք, քույր, տասնուչորս տարեկան ե: Եսպիսի յերեխան Բնչ կարող ե անել:

— Ժանդարմների սպան ինձ ասաց, վոր ես յերեխան ամենավտանգավոր բալչեիկն եր:

— Յերևակայում եմ, թե ինչքան ելին վտանգավոր մնացածները:

— Քսան կաթիլ տամ, սրան:

— Այո, քսան կաթիլ,—բավական ե:

Գուլըր մի ձեռքը մացրեց ժողովի բարձի տակը. մյուս ձեռքով նա ժողովի շրթունքներին մոտեցրեց, ինչ վոր խիստ հոտ ունեցող հեղուկով լիքը: մի բաժակ:

— Ես բոլորը պետք ե խմել:

Սուր հոտը կապով ժուժայի քթին: Նա պղտոր հեղուկը խմեց, ու դրանից շնչելը միանգամից հեշտացավ:

— Յերեկոյան նրա վիրակապը պետք է փոխել, ասաց բժիշկը, — ու պետք է թեթև մասջուր տալ: Ուրիշ վոչինչ:

Դուռը բացվեց և նորից փակվեց: Սենյակում միանգամայն լռութիւն տիրեց:

Հանկարծ ինչ վոր բան խշխշաց: Վոսնաձայն լսվեց: Հետո շշնջոց:

— Փոքրիկ բալշիկի աղջիկը դաբթնել է:

— Այո, ուշքի յե չեկել: Խեղճը...

Այդ ձայները առելի չեյին, թշնամական չեյին: Ժուժան իսկույն վորոշեց այդ բանը, և սկսեց ուշադիր աշխատել: Բայց նա վախենում էր շարժվել, վախենում էր ցավից, դիտեր, վոր սաստիկ կցավի:

Այլ կողմից լսվեց.

— Քույրը գնաց:

Ձախ կողմից պատասխանեցին.

— Այո, այո, գնաց...

Մեկը սողաց դեպի ժուժայի վորտքերը: Հոտո ելի մի ստվեր: Մահճակալի լերկու կողքերից լերկու գլուխ հայտնվեցին: Մեկը պառավ կնոջ գլուխ էր, մյուսը՝ լերիտասարդ աղջկա:

— Սաս... խոսել չի կարելի: Մենք ամեն բան դիտենք: Թե դու ինչպես եստեղ ընկար, հետո կպատմես...

Ժանդարմների ավագ սպան եստեղ էր... Հետո քեզ կհարցաքննեն... Մենք վոստիկանական հիվանդանոցում ենք: Այդ տիկինը-քույր է: Վոչինչ չասես նրան... Սաս... Եստեղ են գալիս... գալիս են...

Յերկու գլուխն ել անհետացան:

Դուռը բացվեց:

Ժուժան ականջները սրեց... Մաքու՞ն անցավ.— «Ես սվքեր են: Լավ մարդիկ են, թե վատ: Ընկերներ են»:

Կոշկի խթանների ձայն լսվեց:

— «Ես ժանդարմներ են», — մտածեց ժուժան և ցընցվեց: Նա հիշեց այն գիշերը...

«Ախ, մեր ե մայրիկա: Ո՛ւր ե մայրիկա»:

Մոտեցան նրա մահճակալին:

— Մյուսներին չհաջողվեց բռնել... Նրանք թուան նավակը: Մթութունից ոգավելով, անցան գետը... Առաջուց նախատեսել ելին... փախան: Սատանան տանի նրանց: Մթնում մեկը վիրավորվեց... Հետո պարզվեց, Վոր կին ե...

— Սա...

«Դա մայրիկն ե լեղել» — անցավ ժուժայի գլխով:

Նրա սիրտը պատրաստ եր դուրս թռչել:

— Հ'ը, փոքրիկն ինչպես ե դգում իրեն, — նրա վրա կռացավ մի գեր գեմք — վորի լերկու կողմը ցցված ելին գեղին բեղերը:

Դորշ ու մութ աչքերը սառնությամբ նայեցին ժուժայի գեմքին: Սպալի կրծքին զրնգացին շքանշանները:

— Ես մորաքույրը կբժշկի բեզ: Հետո լես ու դուն կխոսենք: Դե, մնաս բարե.

Նա ուղղվեց, վայելուչ կերպով մնաս բարե արեց քրոջն ու դուրս գնաց:

Ձախ կողմից շշնջուն լսվեց.

— Դա աժադ սպա Կրտսուկեցն ե: Սոսկալի անալի-

տանն եւ նա քծնում ե քո առջև։ Նրան մի հավատար։ Նա ուզում ե ամեն բան դուրս քաշել քեզնից։ Պատրաստ կաց։

«Ընկերներ են» մտածեց Ժուժան, ու նրա կուրծքը հանգստացավ։ Քունը տանում եր։

... Նա ինչ վոր շատ լավ յերազ եր տեսնում։ Վա. խենում եր դարթնի։ Ամեն բան ենպես գեղեցիկ եր։

Տեսնում եր հորը։ Նա կենդանի չեր. չեր ճոճվում կախաղանից, ինչպես մտքով միշտ յերևակայում եր նրան։

Նրա հագին կաշվե, փալլուն շոր կար։

Գլխարկի վրա փալլում եր կարմիր աստղը։ Գետնից վերցրեց մի փոքրիկ ճնճղուկ, նստեցրեց իր մեծ ձեռքի տփին։ Ծնճղուկը նստած եր նրա ձեռքին և ծվլում եր։

— Ես դձև լես բռնել, Տոլյա քեռի,—ասաց հայրը դառնալով ծերունուն։ Շնորհակալ եմ, ընկեր.—նա գլուխ տվեց ծերունուն։—Յեռ յերբեք չեմ մոռանալ։ վոր դու հոգս ես տարել պրոլետար վորքիկի համար։ Քո արածը յերբեք չեմ մոռանալ։ Մի անհանգստանալ Տոլյա քեռի, կգա ժամանակը և լես կհատուցանեմ քեզ։ Բուդապեշտում դեռ պրոլետարական հեղափոխութիւն կլինի, և քո՝ ծերունուդ ծառայութիւնները չի մոռանալ կարմիր կոմիտար Հոսեփ Հերին։

Տոլյա քեռին ծխում եր և նրա դեղին բեղերը ցնցվում ելին ծիծաղից։ Նրա աչքերը կիսափակ ելին, բայց յերևում եր, վոր նրան դուր եր գալիս հոր գովառանքները։

Ժուժան մոտեցավ հորը և ձեռք տվեց դեղին պատյանի մեջ դրած, կողքից կախած նրա ատրճառակին։

— Յերկար ժամանակ տանը չեմ լեզել,—ասաց հայրը, հիմա ել միայն մի բաղկնով եմ լեկել։ Պետք է դնամ։

Մոռեցավ մորը, գրկեց նրան։ Ու միայն ալժամ ժողովան նկատեց մորը։ Նա կանգնած էր սեղանի մոտ և ծիծաղում էր... Աչնպես էր ծիծաղում, ինչպես լերքեք չէր ծիծաղել։

— Դե, ասաց հայրը,—սերվում^{*)}

Դուռը բացվեց։

Դուռնայի ուղղածից ափին կանգնած էր սավառնակը։ Նրա մի թևը կախված էր անդունդի վրա։ Հայրը մտավ եղ սավառնակը։

— Նա ջուրը կընկնի։

— Մի վախենար աղջիկս, դա հիդրոսպլան է։

Մեքենան դնաց ջրի վրայով, հետո բարձրացավ, թռավ հեռու-հեռու։ Ձեպեպան կղզիներից են կողմը։ Ժողովան տեսնում էր, թե հիդրոսպլանն ինչպես արագ թռչում էր... արագ ո...ո...ո...։

Սոսա... Աննուշկա, Սոս... Ջարթնեց։

Ու մերկ վոտքերի արագ թփթփոցը լավեց սենյակում ժողովի մահճակալի մոտ։

— Ջարթնել ես։ Շատ լերկար քնեցիր։ Լավ յերազ չեյիր տեսնում։ Յերազում աղաղակում ելիր։

Ժողովան ուզում էր մի բան ասել, բայց չորացած շրթունքները վերքերի պատճառով թխվել ելին։ Նրա ձայնը ցածր—չատ ցածր էր—հառաչանքի լեր նման։ Ուզում էր թքով թքշել շրթունքները, բայց լեզուն վիրակապին դիպավ։

— Զուռը...

^{*)} Ցանսութլուն։

— Սո՛ւսս... Մի աղաղակիր։ Յեթե աղաղակես, կզան մեզ կհեռացնեն։

— Վա-այ... կողքս ցավում ե։

— Կամաց, կամաց։

Սենյակում մուժն եր։

Ծանր քնից հետո, ժուժալի տենդը բռնեց։ Կամ մրսում եր, կամ անտանելի շոգ զգում։ Նրան թվում եր, թե իր շուրջն ամեն բան ուռել ե։ Մարմնի վորևե անդամը շարժելն անկարելի լեր։ Նրա ամբողջ մարմինը ցավում եր—գլուխը, բերանը, վոտքերը... Կարծես մի մեծ ծանրություն եր կախ տված նրանից։

Ժուժան մեծ, սև աչքերով սկսեց դիտել սենյակը։

Մոտ չեկավ աղջիկը.

— Հը՛, շատ վատ ե։

— Վոնց վատ չլինի։ Տեսնում ես, ինչպես են ծեծել նրան... Միայն գլխին չերկու վերք կա։ Բւ ինչ վերքեր։ Ճակատին ու բերանումը։

Ատամները հանել են, փշրել։

Ժուժան ինչքան ել վոր իրեն զսպում եր, բայց ելի կամաց, լերելխալարար լաց եր լինում։ Նա շարունակ ավելի ու ավելի ուժեղ եր լաց լինում։

Միջանցքում վոտնաձայն լսվեց։ Դռան ապակիները զնգզնգացին։ Մտվերները մկան խշխշոցի նման փախան։ Սենյակում բոցավառվեց ելեքտրական լույսը։ Մոտեցավ բուլլը.—նրա աչքերը սառը—սառն եյին։

Ժուժան պարկած եր անշարժ, գլուխը մի քիչ դեպի բարձր թեքած, վորի մաքուր լվացած լերեսից լավ հոտ եր գալիս, աչքերը փակել և լաց եր լինում, լաց եր լինում։ Նրա արցունքներից բարձր թրջվել եր։

«... Յերբ հայրս պատերազմ դնաց, մենք ապրում ելինք Բուդապեշտի մոտ և աշխատում ելինք Ղուր քաշելու տեղը, — այսպես սկսեց ժուժան իր պատմութիւնը: Մինչ այդ հայրս աշխատում եր ամառը Բաշկալում յերկաթուղի շինելու — հողային աշխատանք եր անում: Յես հետեղ շատ կաթ ելի խմում: Ենտեղ ժողովուրդը հարուստ և ապրում: Ամեն բան կա և ամեն բան արժան ե: Նույնիսկ մայրիկս, նա ել կազդուրվեց ենտեղ: Այդ Ղուր քաշելու տեղը աշխատանքն ավելի վատ ե, քան յերկաթուղու վրա: Այնտեղ կեղտոտ ե, սառն ու թաց: Իրիկունները հացը իկիս վոսկրնեքը միշտ ցավում ելին:

Մայրս կամֆարալի սպիրտով մաժում եր նրա վոտքերը: Յես միշտ բռնում ելի կամֆարալի սրվակը և հոտ ելի քաշում. շատ դուրեկան հոտ ունեւր:

Աշնանը, յերբ Ղուր քաշելու տեղը սառուցով ծածկվեց, մայրիկին ասանցին, վոր դրասենյակ դնա — «նպաստի» վոր են ժամանակ տալիս ելին:

Հետո մայրիկս մտավ դորժարան և ուսմբեր եր պատրաստում: Են ժամանակ յես փոքր ելի, բայց արդեն բան պատրաստել գիտելի: Իմիջի ալոց, մենք Վիարակ մորաքրոջ մոտ ելինք ապրում: Յես նրան ոգնում ելի կերակուր յեմելիս: Բարձրանում ելի աթոռակի վրա և կարտոֆլով արգանակը խառնում ելի: Համենայն դեպս ճաշը շատ քաղցր եր լինում:

Սենյակում նրանք յերեք հոգի ելին:

Աննան — մի ուռողջացող աղջիկ, վորին հարցաքննության ժամանակ ծեծել ելին:

Կարպինեկ մորաքույրը, վորին, այն գիշերը, յերբ ձերբակալեցին նրա ամուսնուն, ժամդարմներէց մեկը հրա-

ցանի կոթով ախպես խփեց, վոր նա մինչև ես որ ել արյուն ե թքում:

Յերրորդը ժուժան եր, վորն արդեն կարողանում եր նստել մահճակալում, թեև գլխի վիրակապերը դեռ յետ չելին արել:

Ամեն որ խոսում ելին են մասին, թե ժուժալին պետք ե անդամահատեն, վորովհետև նրա վոտքը կոտրել եր, բացի դրանից գլուխն ել ինչ վոր կոտրվածք ուներ:

Ժուժան շունչ առնելով, շարունակեց.

«Ամեն որ մայրիկը գործարանից տուն եր վերադառնում հոգնած, նույն իսկ հաց ուտել չեր կարողանում, միայն շարունակ հարցնում եր.

— Փոստի ցրիչը չի՞ լեկել:

Նա շարունակ նամակի յեր սպասում ճակատից—հորիցս:

Մինչև ձմեռը ճակատից մենք միայն լերեք բացիկ ելինք ստացել: Մեկում գրած եր. «Գերմանական, ձեռքը դասացած կայսրը իր խոսքը չի պահել, սատանան տանի նրան, չի պահել իր խոսքը, այս ձմեռ մենք տուն չենք գալ, պատերազմը վերջ չի ունենալ»:

Մայրիկը լաց եր լինում, իսկ Վիտրակ մորաքույրն ասում եր.

— Լավ կլինի, չեթե Ոսեփն եղպիսի հիմարութուններ չգրի: Ավելի վատ կլինի:

Մայրիկն ինձ միշտ ստիպում եր կարդալ «Մարտի դաշտում ընկած հերոսների շարքը».— արդյոք սպանվածների ցուցակում չկա ՅՁ-ըդ հետևակ գնդից Հովսեփ Հերին:

Պատերազմի վերջը չեր լերևում:

Ձմեռը մենք նամակ ստացանք Ռուսաստանից. հայրս գերի յեր ընկել:

Մայրիկն ինչպես ուրախացավ. աստված իմ, ինչպես ուրախացավ...

Վիտրակ մորաքույրը շատ վատ կին էր: Նա, վրդովված մեզ հայրենիքի դավաճաններ ձեր ասում:

— Յերբ տղամարդը գերի յե ընկնում, ինչպես կարելի յե ուրախանալ, ասում էր նա:

Բայց մայրիկը նրա վրա ամենևին ուշադրութուն չէր դարձնում:

Յեվ ահա, յերբ մայրիկին փոխադրեցին Չեպելի գործարանը, անսպասելի կերպով հայրս վերադարձավ գերությունից: Նա նիհար էր, շորերը բոլորովին մաշված էր:

Նա միայն մի գիշեր կարողացավ տանն անցկացնել: Հաջորդ որը նա արդեն պետք է վերադառնար զորանոց:

— Նլի ճակատ կուղարկեն, ասում էր մայրիկս:

— Իսկ յես չեմ գնալ: Յես իտալական ճակատը չեմ գնալ, Յես Ռուսաստանում մի բան սովորել եմ և գիտեմ, վոր կարելի յե այլ կերպ անել:

Մայրս լաց չեղավ:

— Դու շուտ... Նստեղ մարդկանց կարճ են դատաստան անում: Ավելի լավ է դու արձակուրդ խնդրես, հետո մենք եստեղ կաշխատե՞ք, վոր բոլորովին ազատեն:

— Յես արձակուրդ չեմ խնդրիլ: Յես ինքս ինձ կադատեմ. Իսկ մեռնելու—չեմ գնալ:

Մյուս որը մայրիկս դործի չգնաց: Մինչև իրիկուն քերվուսով կանգնած ելինք զորանոցի մոտ: Հայրս դուրս չէր գալիս: Միայն իրիկվան դեմ դռների մոտ մի շոկատ գինվորներ յերևացին. Հայրս նրանց մեջն էր:

Հարմար ըոպե գտնելով, նա ասաց մեզ:

— Գնացե՛ք տուն: Յեա ճակատ եմ գնում:

Ամբողջ գիշերը լես ու մալրիկս լաց ելինք լինում:

Վիտրակ մորաքույրն ասում եր, թե նա, ով փախ-
չում ե ճակատից-դասալիք ե, և նրան գնդակահարում են:
Մայրիկս շատ եր վախենում, վոր հայրս կփախչի ճակա-
տից:

Յեա չեյի վախենում: Յեա մտածում ելի, յեթե հայրս
փախչի, նա գիտե, թե ինչու կփախչի և գիտե, թե ինչպես
պետք ե անել այդ: Բայց այնուամենայնիվ գիշերները
վատ ելի քնում և շարունակ մտածում ելի հորս մասին:

Վիտրակ մորաքրոջ մարդը պատերազմ չի գնացել,—
մտածում ելի լես. իսկ իմ հայրը հենց նոր վերադարձավ
գերությունից ու նորից պետք ե ճակատ գնար:

Յերբորդ գիշերը դուռը ծեծեցին:

Յեա վեր թռա:

Հայրս յեկավ: Նոր գինվորական շորեր եր հագել,
նոր փոկեր կապել: Հրացան չունեք, այլ միայն լերկաթե
սվին:

— Յեա փախա,—ասաց նա մորս:—Միայն թե դու
լաց մի լինիր: Կգնամ ծերունի Տուլալի մոտ ապրելու—նա
ապրում ե ջուր քաշելու տեղը, ենտեղ ել կթագնվեմ:

Բայց հորս չհաշողվեց Տուլա քեռու մոտ գնալ: Առա-
վառը պահակ լեկավ նրա լետեից: Վիտրակ մորաքույրը
նրան մատնել եր:

Հորս տարան:

Բայց վորովհետե նա «գիմադրություն ցույց տվեց»,
ինչպես մեզ ասացին գինվորական բանտում, ապա նրան
պահեցին հարցաքննության:

Դա ետպես պատահեց.

Հայրս չեր ուզում անձնատուր լինել: Նա մի զինվորի ձեռքից հրացանը խլեց, վրա թռավ դեպի սպան և փողը նրան դեմ արավ: Մայրիկս լաց յեղավ ու սկսեց խնդրել, վոր հրացանը չիտ տա և չկռվի: Յերչար համոզեցին նրան:

Բայց հենց վոր նա հրացանը տվեց, սպան թրի սրովը խփեց նրա դիտին:

Արյունն լնչպես եր հոսում... սարսափելն... Հայրս գունատ եր, բայց և ափսոսեց ծիծաղում եր: Նայեցմ որս... Նրա աչքերում ցավ ու արցունք կար, բայց նա լաց չեր լինում:

— Տեսնում ես,—ասաց հայրս—անձնատուր յեղա... Այ, լնչ դուրս յեկավ:

... Բայց և ափսոսեց նրա բաղդը բանեց: Այդ բանը նա հետո ինքն ել ասաց: Չե վոր նա ընկավ բանտին կից հիվանդանոցը, ու նրան չգնդակահարեցին:

Իսկ հետո... հետո հեղափոխութուն յեղավ...

Հայրս ասում եր.

— Ես տեսակ հեղափոխութունը իսկի բանի պետք չե: Բոլոր տերերը մնացին իրենց տեղերը: Նրանց վզին տալով պետք եր դուրս քշել, լնչպես ալդ Ռուսաստանումն արեցին:

Մայրս նրան խնդրում եր գործի կենալ:

Նա չեր ուզում:

— Այժմ ուրիշ աշխատանք կա—հեղափոխութունը պետք ե վախճանին հասցնել:

Նրանք վիճեցին: Մայրը լալիս ու հայհոյում եր հորս:

— Ծնվել Գերի յես լեղել, աշխատելը մոռացել ես: Հայրս չեւ բարկանում մայրիկի վրա. նա միայն ասաց:

— Դու անգիտակից ես, Ե՛րժի:

Նա ամբողջ ուրերով կորչում եր: Գնում եր/ Բուդապեշտ, քաղաք և Թափառում եր պատերազմական զերիների հետ: Յերեկոյան հոգնած, վերադառնում եր տուն:

Մայրիկին գործարանից արձակեցին: Հաջ հունեյինք: Հայրս բարկացած ասաց, վոր փող կատանանք: Նա գնաց շոգենավային վարչութիւնը, ուր առաջ, ջուր քաշելու տեղը աշխատել եր, և հին ժամանակվա համար փող պահանջեց: Տվեցին: Դրանով ել ապրում եյինք:

Մի անգամ ել հայրս յերեք ուրով կորավ: Մայրիկս շատ վախեցավ, վոր ելի նրա հետ մի բան կլինի պատահած, և գնաց քաղաք:

Յերբ մայրիկս վերադարձավ, նրա աչքերը լաց լեղած եյին:

— Ելի նստած են,—ասաց նա: Ձերբակալել են. բաշեիկ ե:

Այդ ժամանակ, մեզ մոտ շատ պատերազմական զերիներ եյին գալիս: Նրանց մեջ մեկը կաք—ընկեր. Գասպարը: Նա ենպես լալն եր: Մայրիկին փող եր տալիս: Նա ասում եր մեզ.

— Մի վախենաք, ընկեր. Հերին կվերադառնա: Նա շուտով կազատվի: Ու միայն հիմա կլինի հեղափոխութիւնը, իսկական հեղափոխութիւնը:

Յեւ իսկապես, յերեք որից հետո հայրս վերադարձանք. աղջկա պատմ.—Ց

ձալ: նրա հագին նոր շորեր կար, նոր ատրճանակ ունեւր, գլխարկի վրա կարմիր ժապավեն եր կապած:

— Իսկական գործ ե սկսվում, Երժի—ասաց նա,—
գնանք քաղաք:

Մալրս չեր ուզում գնալ նրա հետ, բայց յերբ ընկեր
Գառաւորն սկսեց համուզել նրան, նա համաձայնեց և հորս
հետ գնաց քաղաք:

Նրանք միայն հետեյալ որը տուն վերադարձան:

Այդ ժամանակից սկսած հայրս ատրճանակ կապած
եր ման գալիս: Նա բալշէիկ եր: Կաշվե շոր եր հագնում
և պարզ գլխարկ:

«Հոսեփ Հերին—սամուելիստ ե»,—վոստիկանատնե-
րում ել ալգպես եր նշանակած:

Մալրիկս սկզբում վոչ մի բանի չեր հավատում և ա-
սում եր:

— Դատարկ բան ե: Տեսնենք վերջն ինչ կլինի: Իմ
սիրտն զգում ե, վոր վատ կլինի:

Յերբ չեխերի դեմ քաղաքացիական կռիվ սկսվեց,
մալրիկս նորից գործարան գնաց՝ աշխատելու:

Հայրիկիս հետ ավտոմոբիլով լեկած բժիշկը քննեց
ինձ: Մեծ ավտոմոբիլ եր: Ընկեր Սամուելին ե ման գալիս
սրանով—ասաց ինձ հայրս: Ե, իսկ յերբ յեղանակները
տաքացան, մայիս ամսին ինձ տարան Շվաբական սարերը
մանկատուն: Քաղաքից ընկերներ եյին գալիս և մեզ հետ
զրուց անում: Այստեղ միայն բանվորների լերեխաներ
եյին ապրում: Մեզ այստեղ շատ բան եյին սովորեցնում:
Սովորաբար մենք հավաքվում եյինք արեգակի տակ, սպի-

տակ, մարմարե սանդուխքի վրա և պատմութիւններ ելինք լսում կարլ Մարքսի ու Լենինի մասին:

... Նստեղ, սարի վրա մի շատ գեղեցիկ, մեծ ու սպիտակ տուն կար, վորտեղ և ապրում ելինք մենք: Առաջ նա պատկանում էր մի կոնֆետի գործարանատիրոջ: Այդ գործարանատերը հարյուր շուն ուներ: Շները ջոկ տնակում ելին ապրում: Տերը հեղափոխութիւնից փախել էր Պրագա:

Եւ բանը մեզ պատմում էր Ընկեր Արագին:

Շներից մեկը մնացել էր մեզ մօտ, նրա անունը կարո յեր: Դա մի պառավ ու շատ լավ շուն էր: Մենք յերեխաներս խաղում ելինք նրա հետ:

Ընկեր Արագին մեզ շատ բան էր սովորեցնում, թե ով է բուրժուայր, ով է պրոլետարը, թե պրոլետարներն ինչպէս պետք է կադմակերպվեն: Հայրս էլ միշտ խոսում էր այդ մասին նախկին պատերազմական գերիների հետ— վորոնց մօտ նա գնում էր Բուդապէշտ, ու յերբ նա բացատրում էր նրանց ալս բանը, նա այնպէս էր խփում սեղանին, վոր սեղանը ճաքում էր նրա բռունցքի տակ: Ո՛ր, իմ հայրը շատ ուժեղ էր: Մինչև պատերազմը նա մի անգամից վեց փութը բարձրացնում էր:

— Հա, էլ ի՞նչ ելիք անում մանկատանը:

Հանգստութիւն տիրեց: Ժուժան լուռ նայում էր իր առջև:

Հետո հաղիվ լսելի, թռչնի ձայնով սկսեց.

— Մենք «ինտերնազիոնալ» ելինք յերգում: Ի՞նչ գեղեցիկ էր... Դուք յերևի արդեն մոռացել եք...

Յեւ խիստ կերպով, հանգիմանական ձևով նայեց յերկու կանանց:

Աննան աչքերը ցած դրեց, կարպինեկ մորաքույրը ցածրաձայն պատասխանեց.

— Ե՛ր, ի՞նչպես կարելի յե դա մոռանալ, Միայն թե այժմ չի կարելի յերգել...

— Ձի՛ կարելի՞... Յես միշտ յերգում եմ... միայն ինձ համար, վորպեսզի լսելի չլինի...

— Հետո ել ինչ... քիչ լռությունից հետո հարցրեց կարպինեկ մորաքույրը:

«Հայրիկս կամ չեխական ճակատումն եր լինում, կամ ուռմինական: Նա Սամուելի զբահապատ գնացքովն եր գնում-դալիս: Յերկու անգամ Բուդապեշտ յեկավ: Մեզ մոտ ել հյուր չեկավ: Նա ելի ենպես գեղեցիկ եր, ինչպես տաջ: Մի անգամ նա ինձ համար Վիեննայի շոկոլադ բերեց: Ո՛հ, ի՞նչ հաժով եր:

Հայրիկս կարճ ժամանակով եր դալիս և միշտ շատ-պում եր:

— Շատ գործ կա, հեղափոխությունը վտանգի մեջ ե,—ասում եր նա լուրջ կերպարանքով:

Միանգամ շատ յերեխաների յետևից յեկան իրենց ծնողները և հետները տաբան: Մենք մանկատանը միայն տասնուհինգ յերեխա մնացինք: Եդ որը ընկեր Արադին ել չեկավ:

Միայն Բուդկոնի մորաքույրը մնաց մեզ հետ:

Նա մեզ հորդորում եր, վոր լաց չլինենք:

— Գործերը վատ են, բայց ամեն ինչ կանցնի:

Այժմ Բուդապեշտում — հակահեղափոխություն ե...

Եդ որը Դունայի վրա նավերից ել ելին կրակում: Մենք այգուց լսում ելինք: Իրիկունը հայրիկս յեկավ: Նա հոգնած եր, տանջված:

— Ծանր որ ապրեցինք, ժուժաւ։ Զվախեցա՜մ։
Յես ասացի։

— Վնչ, հայր։— Բայց ճշմարիտն ասած, յերբ կրակում
եյին, յես սարսափում եյի։

Նա ինձ մի բուռը լիքը կրակած փամփուշտներ տվեց։
Յես նրանցով խաղում եյի։

— Հոր աղջիկն ե, — ասաց Բուդկոնի մորաքույրը։—
Նա չի վախենում։

Յերկու որից հետո յերեսաներից շատերը յետ վերա-
դարձան. ելի ուրախ եր մեր որը։ Ընկեր Արաղին յեկավ։
Նրա ձեռքը փաթաթած եր վիրակապով։ Նա մեզ պատ-
մեց, թե հախահափոխականները ինչպես են ձեռքը վի-
րավորել։

Մալբիկա ամեն կիրակի դալիս եր մեզ մօտ։ Մենք
միասին ղըոսնում ելինք այդում։ Յերբ նա գնում
եր, պինդ սղմում եր Բուտկոնի մորաքրոջ ձեռքը և ա-
սում եր։

— Շնորհակալ եմ, վոր իմ աղջկանը ուշադրութիւն
ես դարձնում։

Յերբ քույրը ուղեկցելու գնաց բժշկին մլուս սրահը,
հարպինեկ մորաքույրն ասաց.

— Նա չի վերադառնալ։ Յեկեք շարունակենք։

«... Հա, վսրտեք կանգ առա... հա... Մի ուրբաթ
որ, ուշ գիշերով իմ յետեից յեկավ մայրիկա։ Յերեսանե-
րից շատերին դեռ առաջուց եյին վերցրել։ Բուդկոնի մո-
րաքույրը նյարդալնանում եր։

Իմ մի շորը լվածքի մեջն եր, բայց փնտռելու ժա-
մանակ չկար։ Մալբիկա շատ եր շտապում։ Աչքերից յե-
րկում եր, վոր լաց եր յեղել։

Մենք սարից ցած իջանք և շատ յերկար ժամանակ գնում ելինք, Յես շատ ելի հոգնել, ուզում ելի լաց լինել: Յերբ մենք կամուրջն անցանք, մայրիկս կառք վարձեց: Մենք հասանք քաղաքի ծալրին: Կառապանը չեր ուզում դրանից են կողմը տանել: Մենք ելի գնացինք: Գնացինք, շատ, շատ յերկար... Մենք հասանք շուր քաշելու տեղը:

Յես իսկույն ճանաչեցի եղ տեղը: Տոլլա քեռին եղտեղ ե ապրում: Մենք յեկանք նրա մոտ ապրելու:

Մայրիկն եստեղ իմացավ, վոր կոմունիստների վերջն ե: Հենց նույն գիշերն ամեն ինչ վերջացավ...

Մենք յերեք որ սպասում ելինք հորս: Նա գեռ չեր գալիս: Ամեն գիշեր մայրս կարծում եր թե կգա: Ուզում եր գնալ քաղաք:

Գործարանում մայրիկիս ասել ելին, վոր չերեա,— Վատ կլինի... Մայրիկս շատ եր լաց լինում:

Տոլլա քեռին տսում եր.

— Յեթե յես ել յերիտասարդ լինելի, յես ել կարմիր կլինելի:

— Դո՛ւք, բոլոր տղամարդիկդ—հիմարեք,—պատասխանում եր մայրս: —Միայն կովել գիտեք:

— Վո՛չինչ, երժի, միայն թե Հովսեփն ազատվեր, մխիթարում եր Տոլլա քեռին մայրիկիս:

Տոլլա քեռին ծեր եր: Նա սիրում եր ծխել: Սիրում եր նույնպես շուր քաշելու տեղը ձուկ վորսալ:

Միջանցքում մեկը կանգ առավ, դռան մոտ: Ժուժան նայեց այն կողմը: Նա կարողանում եր այնպե՛ս նայել, վոր վո՛չ վո՛ք չեր նկատում այդ:

— Հետո—բ՛նչ եր բռնում գետիցը:

— Նա ձուկն եր վորսում: Մի անգամ նա գետի ափին ճնճղուկ եր բռնել, ենպես փոքրիկ, գորշ...

Մեկը սենյակը մտավ: Ժուժան շարունակեց իր պատմութիւնը: Աննան ավելի հարմար նստեց իր աթոռակի վրա:

Ժուժայի ձայնը ավելի բարձր եր հնչում:

— Շատ լավ թռչնակ եր: Նրա մի վոտքին թել եր կապած, եդպես նա վոստվոստում եր հատակին: Նա սովորեց ինձ, և միշտ նստում եր իմ ուսին: Յես նրան Բեշկա յելի ասում: Չափազանց շատ եյի սիրում նրան:

Հիվանդանոցի ծեր ծառայողը կանգ առավ մահճակալի մոտ: Խիտ հոնքերի տակից, նա խստութեամբ նայեց նրան:

— Լավ կլինի շատ դուրս չտաք, յերեխայի հետ: Յերբ դուռը փակվեց նրա յետեից, Աննան կրէին գրկեց իր ծնկները և հարցրեց:

— Ե՛ հետո, ի՞նչ պատահեց ճնճղուկին:

«...Ջնջղեցին... Գասպար քեռին հանկարծ վոտքը վրան դրեց: Նա շատ եր շտապում ու չնկատեց ճնճղուկին: Խեղճի վոսկրները այնպես ճռճռացին, ինչպես մարդ վոտքը լուցկու տուփի վրա դնի:

Փոքրիկ թռչնակը շատ եր քեռի Գասպարի մեղքը գալիս: Յես քեռի Գասպարի վրա չբարկացա, Յես միայն մի քիչ լաց չեղա, բայց վոչ մալրիկի ներկայութեամբ, նրա առջև չես լաց չելի լինում: Դրա համար մայրիկս գովում եր ինձ:

— Դու իմ խելոք աղջիկն ես: Դատարկ բաների համար մորդ չես տանջում»:

— Բա ի՞նչ չեղավ հայրդ—քիչ լուութիւնից հետո, հարցրեց Կարպինեկ մորաքույրը:

«... Մի ամբողջ ամիս մենք նրան սպասեցինք: Մայրիկս վաղինչ չեր անում, միայն սպասում էր նրան, ահանջ եր դնում, թե լերեկոները վորեւե կերպ դուռը չի թակի: Մենք գիտեցինք, իհարկե, վոր նա ցերեկով չի գալ: Բայց նա գիշերն ել չեկավ: Մայրիկը գիշերները մինչև լույս չեր քնում: Տույա քեռին ել չեր դնում ձուկ վորսալու: Մի անգամ ձկան տեղ նրան դիակ եր պատահել: Նա մալրիկին ասաց, վոր ջրի մեջ շատ դիակներ են լողում:

— Բուդապեշտում պարոնները գնդակահարում են, առանց քաշվելու:

Մի անգամ գործարանից յեկան մայրիկի մոտ և ասացին, վոր հայրս վարչատանն ե, տեսել են նրա ազգանունը: Նա սամուկիստ ե:

Հետեյալ որը մենք գնացինք վարչատուն: Ամբողջ որը սպասեցինք: Իրիկունը մենք վերադարձանք, առանց մի ոգուտ ստանալու: Հաջորդ որը մայրիկս մենակ դնաց: Յես սպասում եյի նրան, և վախենում ե, թե նրան ելմի բան չպատահի: Իրիկունը նա ասաց:

— Այո, նա այնտեղ ե: Վաղը նրան կտեղափոխեն վաց: Նրան չեն դադի:

Եդ որվանից մենք հաճախ գնում ելինք վաց: Մի անգամ հորս տեսա: Նա լերկար մորուք ուներ, սաստիկ նիհարել եր: Մայրիկս խնդրում եր նրան, վորպեսզի նա չհամառի և չհակաճառի, դրանով գործը միայն կփչանա:

Հայրս լերկար լսում եր: Հետո ասաց.

— Պետք չե, Երժի: Յեթե ինձ մահ ե վիճակված, ապա թո՛ղ մեռնեմ ինչպես պետք ե, պրոլետարի նման: Իմ մասին մի տխրի Երժի:

Մայրիկս ինձ ըստձրացրեց, ցանկի միջով առաջ հրեց, Հայրս համբուրեց ինձ, Իսկ մայրիկին Հկարողացաւ համբուրել: Նրանց հետու քշեցին, իսկ մենք եւ պետք ե գնայինք:

Դրանից հետո մի ամբողջ ամիս մենք Վաց Հգնացինք: Հետևում ելինք լրագիրներին, թե չերբ պետք ե քննվի նրա գործը:

Յերբ ձյուն չեկաւ, մենք ելի Վաց գնացինք: Փնտռեցինք պետին: Մայրիկը գնում եր գրասենյակները, հարցնում եր, թե վորտեղ ե սամուելիստ Հոսեփ Հերին:

— Ժամանակ Հունեմ ձեզ տեղեկություններ տալու, ասաց դեղին ընդերով մի ժանդարմ:

Մայրիկս խնդրում եր:

— Ախար մենք հեռվից ենք յեկել: Յերեխալի հետ...

— Կարեք... աղաղակեց ժանդարմը:

Դուքս գալով, մենք պատահեցինք մի կնոջ, վորն ասաց.

— Յերեկ Հե մյուս ուրը կախեցին...

— Բա գործի քննությունը,—հարցրեց մայրս հուզվելով...

— Քննություն... —հառաչեց լետեր, սանդուխտների վրա նստած ծերունին:

— Ինչ ե պատահել նրանց—հարցնում եյին շատերը:

Ծերունին լաց եր լինում: Արցունքները նրա մատների արանքով անցնում ե թափվում եյին ցանցառ, սպիտակ մորուքի վրա:

Նրա վորդուն անցյալ ուրը կախել ելին...

— Ո՞վ եր վորդին:

— Սամուելիստ...

Մայրիկս մեկ սրան ե գիմում, մեկ նրան, ձգում ե ինձ, քարշ ե տալիս, Վալում ենք սանդուխքներով:

Առաջներս թուրը կապած մի ժանդարմ ինչ վոր մի ցուցակ ե կախում:

Բոլորը խմբվեցին նրա շուրջը:

Մայրս ընկավ պատուհանին:

Ժանդարմը դուրս յեկավ ամբոխի միջից, նա նայեց ինձ:

— Դ՞նձ ի՞նչ ես ուզում:

— Մենք չեկել ենք տեսնվելու սամուելիստ Հոսեփ Հերիբ հետ...

Ժանդարմը նայեց թղթին, ծիծաղեց:

— Յերբ վոր Բուգապեշտում նորից կոմսունա կլինի դու կտեսնես նրան:

Ու Գնաց:

Մայրիկս հարցրեց, թե եդ ինչ թուղթ կախեց նա:

— Դա կախվածների ցուցակն ե:

Մայրիկս հենց իսկուհն ուշաթափվեց: Զուր ածեցին նրա վրա: Նա վոչ մի կերպ ուշքի չեղ գալիս:

— Դու վորք ես մնացել, Ժուժկա վորք... լալիս եր մայրիկս ե աղաղակում, — կախել են նրան... Յես չեյի կարողանում լաց լինել: Մայրիկս մեղ լերկուսիս փոխարեն եր լալիս:

Տույա քեռին սկզբում խաչակներեց: Հետո հախոյեցողաներին: Այդ գիշեր նա կրկին գնաց, սառուցների մեջ ձուկ վորսալու: Նա միայն առավոտը վերադարձավ: Յես դեռ քնած եյի: Մայրիկս հիվանդացավ:

Տույա քեռին այդ ժամանակ մեղ շատ ողնեց:

Յերբեմն մայրիկս գնում եր Բուգապեշտ՝ ձուկ ծախելու:

Մի անգամ Տոլյա քեռին ասաց, վոր ցեմենտի գործարանը նորից բացվում եւ ե բանվորներ են հավաքում: Մայրս գնաց գործարանի գրասենյակ եւ պատահաբար հանդիպեց Գասպար քեռուն: Նա արդեն ընդունվել եր: Նա մայրիկին ասաց, վոր ում վոր ցուցակագրում են, նրանց վերջին հերթին են ընդունում (մոռացա ասել, վոր լես ու մայրիկը պետք ե ամեն շաբաթ հալոտնվելինք ժանդարմերիա՝ ցուցակագրվելու, ուր աշխատանքի գրքուկին կնիքելին խփում):

Գասպար քեռին գործարան եր մտել ուրիշ ազգանունով: Մայրիկը լերկար խորհրդակցում եր նրա հետ, թե ինչ պետք ե անել՝ գործարան մտնելու համար: Շատ ելին խոսում հորս մասին: Ընկեր Գասպարը գովում եր հորս եւ ասաց, վոր հույն իսկ լրագիրներնեւերում գրած եր, թե ինչպե՛ս քաջի նման ե պահել նա իրեն: Գասպար քեռին խոստացավ եղ լրագիրը ձեռք բերել ու կարդալ մեզ համար:

Յերբ հորս կախելիս են յեղել, նա աղաղակել ե.

— Կեցցե Խորհրդային իշխանութւո՛ւնը:

Ու դահիճը չի կարողացել ողակը նրա վիզն անցկացնել: Վախեցել ե, գզվելին...

Յես շատ ուրախացա ընկեր Գասպարին հանդիպելով: Նա կարողանում եր ուրախացնել մայրիկին: Մայրիկս հույնիսկ կազդուրվեց:

Գասպարն ասում եր.

— Թեեւ կոմունան ընկավ, բայց դա ժամանակավոր ե, վերսկսեալ աղաները չեն կարող լերկար դիմանալ: Խորհրդային Ռուսաստան կա, Գերմանիայում ել շուտով յերկրորդ հեղափոխութւո՛ւն կլինի:

Չգիտեմ ինչ ճանապարհներով, բայց լերը դարունը բացվեց, մալրիկս ընդունվեց ցեմենտի դորժարանը, վոր շատ մոտ է Դունային, ուր ապրում եյինք մենք, Գործարանի վրա շարունակ ծովն էր բարձրանում. Յես յերկար նայում եյի բարձր խողովակին, դորշ տանն ու մտածում եյի, ա՛յ, ա՛յնտեղ է աշխատում մալրիկս, իսկ յերեկոները արշուն է թքում»:

Սենյակը մտավ քուլքը, Լուսթյուն տիրեց. Կարպինեկ մորաքույրը վեր կացավ մահճակալի վրայից. Աննան ել վեր կացավ:

— Յես ձեզ քանի անգամ եմ ասել, վոր մի հավաքվեք ևս յերեխայի շուրջը: Նա դեռ շատ թույլ է. Ի՞նչ եք ուզում նրանից:

— Շատ է ձանձրանում, տիկին: Մեղքներս գալիս ե:

— Այո, ճիշտ են ասում, լավեց հանկարծ ավագ սպայի ձայնը, վոր գալիս էր քրոջ յետևից:

— Բարե ձեզ, պարոն սպա,— գլուխ տվեցին նրան յերկու կանայք:

— Բարե ձեզ, բարե ձեզ: Ինչպե՞ս եք: Դու ի՞նչպես ես, փոքրիկ, սկսե՞մ ես կազդուրվել:

— Շնորհակալ եմ:

— Ժանդարմի ձեռքի վրա դեռ մնում է քո աստամի հետքերը: Լավ ատամիկներ ունես: Ա՛յ, սպա, փորձիր քո ատամները:

Այս ասելով ավագ սպան աթոռակի վրա դրեց մի փոքրիկ կապոց:

— Ի՛նչ վերաբերում է խոսելուն, սպա, քո՛ւյր, մի արգելե՛ք ես յերեխային: Իսկապես վոր նրա համար շատ ձանձրալի կլինի:

— Ի՞նչպես կհրամայեք, այնպես կլինի, պարոն սպա:

— Ի՞նչ ե, իսկի չես ել նայում, թե ի՞նչ կա եղ ծրարում: Վա՛ն, իսկի չես հետաքրքրվում:

Ժուժան վերցրեց կապոցը: Բաց արավ: Արծաթե փայլուն թղթի մեջ մի մեծ կտոր շոկոլադ կար:

— Դե, կեր: Շատ համեղ ե: Յերբ կուտես, քեզ համար ելի կքերեմ: Յտեսություն, փոքրիկ:

Ավագ սպան խթանները զընգացնելով դուրս դնաց:

— Յտեսություն, քույր: Հսկեցեք փոքրիկին:

— Զիշտ—շոկոլատ ե՛:

— Այո, շոկոլադ ե:

— Սիրում ես շոկոլադը.

— Շատ.

Կարպինեկ մորաքույրն առաց.

— Տեսեք, ավագ սպա կրախուլեցը վոչ միայն քեթ ու բերան ե փշրում, այլ և շոկոլատ նվիրել ել գիտես:

— Դա չի՛ կարելի ուտել, Կարպինեկ, մորաքույր, զգվանքով յերեսը շուռ ավեց ժուժան:

— Դե, պատմիր, ով եր գալիս Բուդապեշտից ձեզ մոտ:

«... Սկզբում լեկան յերեք հոգի, լրագիրներ բերեցին: Ընկեր Գասպարը կարդում եր:

Նստեղ զանազան լուրեր կալին: Սպաները քանի մարդ են դցել Դունալ, այն մասին, վոր ոռւս ընկերները կռվում են լեհերի դեմ...

— Ախ, յեթե մինչև Գալիցիա հասնեյին...

— Ավելի ել կմոտենան:

Այսպես ելին խոսում:

Մեզ մոտ մի կին ել եր գալիս, Լիզա մորաքույր ելին առում, գործարանի բանվորուհի չեր, շատ ուժեղ կին եր: Նա շատ եր սիրում իմ մորը և ոգնում եր նրան:

Յերբ չեղանակը բոլորովին տաքացավ, Բուդապեշտից մի ընկեր յեկավ: Բացի ընկեր Գասպարից ու մայրիկից, նրա անունը վոչ վոր չգիտեր: Բոլորը նրա անունն ելին տալիս: Նա ել լրագիրներ բերեց:

Ընդամենը հինգ մարդ ելին հավաքվում:

Շատ ելին խոսում:

Տույա բեռին այդ ժամանակ միշտ դուրս եր գնում տանից: Յես ել գնում ելի Շարե Կովաչի մոտ: Նա հարեան տանն եր ապրում:

Յեմենտի գործարանից ել ելին գալիս: Զուր քաշելու տեղից ել:

Են ժամանակ շատ լուրեր ելին պտտվում, թե ուսաները մոտենում են, ու նորից կոմմունա կլինի:

Մի անգամ չերեկոյան, չերբ մեզ մոտ ժողովի հավաքվեցին, իմ փորս սաստիկ ցավեց ու չես մնացի տանը: Ընդամենը տասը մարդ յեկավ Յեմենտի գործարանից ելին, Զեդեկյան կղզուց, գաղութից, Բուդապեշտից, մի չերկաթուղային: Ասում ելին, վոր չերբ ուսաները Կարպատներն անցնեն, ապա Կարպատների մոտ յեզող ուսանաները սոցիալիստական հանրապետութուն կկազմակերպեն:

— Այ, բան կլինի...

— Են ժամանակ մենք կկանգնեցնենք չերկաթուղին և մեծ գործադուլ կսարքենք:

— Դա ինչո՞ւ համար—հարցրեց մեկը: Ավելի լավ չէր լինիլ, յեթե մենք բոլորս գենք առնայինք:

— Վոչ լսով չեր լինիլ — ասաց Բուդապեշտցի ընկերը:

— Գործադուլ պետք չե, հեղափոխություն ե հարկավոր, — ասում ելին բոլորը:

Բուդապեշտցի ընկերը ձեռքը բարձրացրեց:

Նա շատ հանգիստ եր:

— Գործադուլը նրա համար ե պետք, — ասաց նա, — վոր յեթե ֆրանսիացիք, իտալացիք, անգլիացիք կամ ուրիշ ոտար պետություններ ուզենան մեր լերկրի միջով իրենց գործը տեղափոխել, ապա մենք լիակաթգիծը կանգնեցնելով, թույլ չենք տալ այդ բանը: Բացի դրանից գործադուլը մի ազդանշան կլինի բանվորների ու գյուղացիների համար, գենքի գիմելու:

Հասկացած:

Յերբ բոլորը գնացին, մայրս մոտեցավ ինձ և կամաց ասաց.

— Ժուժա, դու խելոք աղջիկ ես: Տես, վոր լեզուդ...»:

Վերախացուն մտավ սենյակը: Նա մոտեցավ ու ասաց.

— Աննա, արի իմ յետեից:

Աննան զարմացած նայեց նրան ու հարցրեց.

— Յե՞ս

— Այո, դու:

Յերբ Աննան գնաց, Ժուժան հարցրեց.

— Իսկ Աննան վոչ վոքի չի ասել:

— Մի վախենար, — պատասխանեց Կարպինեկ մորաքույրը, — նա չի ասել, թեկուզ նրան մաս-մաս կտրտեն: Սպասենք, մինչև վերադառնա:

— Բա ինչո՞ւ կանչեցին նրան:

- Հավանականաբար բժշկի մոտ:
 — Իսկ յեթե հարցաքննության:
 — Եստեղ չեն հարցաքննում: Հավանականաբար
 բժշկի մոտ:

Աննան շուտով վերադարձավ: Նրա աչքերը կարմրած
 էին: Նա լուռ պառկեց իր անկողնի վրա:

— Ի՞նչ ե պատահել, Աննա:

Աննան յերկար լաց եր լինում:

Յերբ ճաշ բերին, ծերունին մոտեցավ նրան:

— Հը, ինչպե՞ս ես, Աննա: Սպան չարչարեց քեզ:

— Դուք ել եք ուզում տանջել ինձ, — հարցրեց Ան-
 նան:

Յերբ նրանք մենակ մնացին, Աննան շորը հանեց և
 ցույց տվեց իր թևերը Հարվածներից կապտած եյին և
 կարմիր շերտեր կար վրաները:

— Նա կամթեց ինձ: Նա ծեծեց ինձ: Ո՛ր, ինչպե՞ս եր
 կամթում ինձ, աստված իմ: Նա հարցաքննում եր, թե
 ինչ եյինք խոսում ժուժալի հետ: Յես վոչինչ չասացի
 նրան: Ասացի միայն, վոր մենք խոսում եյինք ճնճղուկ-
 ների մասին: Իսկ նա սկսեց ծեծել ինձ:

Ժուժան նայում եր Աննային, կապտածներին: Յեր-
 կար ժամանակ լուռ եր: Հետո կարպինեկ մորաքրոջը
 խնդրեց ամանն (горшок) իրեն տալ ու յերբ նա կատա-
 րեց իր խնդիրը ժուժան աջնպես ձևացրեց, թե կռնում
 ե նրա վրա ու աննկատելի կերպով աշնտեղ մի բան
 գցեց:

— Ծնորհակալ եմ, կարպինեկ մորաքույր: Տեղը դիր:

Կանալք նայեցին ամանի մեջ և արծաթե թուղթ
 տեսան: Մուժ շոկոլադն սկսեց հալվել ջրի մեջ:

Նույն խոսքի Աննան ծիծաղեց.

— Իսկ լեթե ավագ սպան կամ քուլը տեսնեն...

Կարպինեկ մորաքույրը միայն գլուխը շարժեց.

— Տեսեք, վոր ավագ սպան եղ բանի համար մեզ չպատժի,

«... Յերեք որից հետո, դիշերը, մեքենավոր նավակով յեկան,— շարունակեց իր պատմությունը ժուժան,— ասացին, վոր Ձերպալկայում ամեն ինչ լավ է, նախազգուշացրին, վոր պետք է զգուշ լինել՝ Շուտով մնացածները բոլորը հավաքվեցին:

Մայրիկն ինձ տոմսակ տվեց, վոր տանեմ ընկեր Գասպարին: Նա Շարե Կովաչի մոտ եր ապրում:

Շարե Կովաչի մայրն ուզում եր, վոր լիս մի քիչ սպասեմ և տապակվող միս ուտեմ:

Յես մի քիչ սպասեցի, բայց վախենալով, վոր նա կսկսի ինձ հարց ու վորձ անել, կամաց դուրս սողացի սենյակից:

Յերբ լիս վերադարձա, այն մասին ելին խոսում, թե պետք է մեքենավոր նավակով գնալ: Տուլա քեռին ձեռքը թափ տվեց և ասաց.

— Ուշադրություն մի դարձնեք, ընկերներ: Եստեղ ենքան մեքենավոր նավակներ կան, վոր վոչ վոք չի հետապնդի մեզ: Յերբ կվերադառնաք, չպետք է բենզինն ու պտազործել: Վերցրեք թիակները: Յերբ կես տեղը կհասնեք, մեքենան թողեք:

— Թիակներ կմն—հարցնում ելին:

— Կհարվի:

Բոլորը ծիծաղեցին:

Տուլա քեռին «մնաս բարև» ասավ լալորին և գնաց Զուր քաշելու տեղը քնելու:

Մայրիկս մոտ կանչեց ինձ և խորհրդավոր կերպով շնչաց ականջիս.

— Գնա բակը:

Յես դուրս գնացի, մոտ բակի մեծ շարդախն ու սկսեցի ականջ դնել: Մութ գիշեր էր. վաղ մի աստղ չեր լերևում: Թեև տաք էր, բայց չես դողում եյի: Տեղավորվեցի մի տախտակի վրա, վոսքերս տալիս ծալեցի: Շատ բան եյի մտածում: Այն մասին, թե լիս ինչպես եյի ապրում Շվաբական սարում Բուդդինի մորաքրոջ հետ, Վալցի մասին... «Յերբ նորից կոմունա կլինի, դուք կհանդիպեք»: Յես աչքերս փակեցի և ննջում եյի: Յերբ սթափվեցի, մթության մեջ խթանների ձայն լսեցի:

«Ժանդարմներ են» — անցավ մտքովս:

Ուզեցի տախտակի վրայից վեր թռչել, վազել:

Բայց վախեցա, սկսեցի աղաղակել ու ճչալ աֆաֆան բարձր, վորքան կարող եյի:

— Մայրիկ, մայրիկ:

Յես դուրս վազեցի բակի մեջ տեղը: Մեկը մոտ թռավ ինձ, ուզեց բերանս փակել... Հետևից մազերիցս բռնեցին: Յես ընկա: Այնքի ուժգին եյի աղաղակում: Ինձ վոսքով հրեցին: Ժանդարմները ճչալով վազում ելին շարդախի շուրջը: Տանից դուրս թափվեցին մարդիկ և սկսեցին ուղղաձիգ ավտով իջնել դեպի գետը:

«Ինչ կպատահի մայրիկիս»: Յես ընկած եյի ցանկապատի մոտ: Ափից կրակում եյին: Հսկում էր, թե ինչպես նավակի մեքենան սկսեց աշխատել: Միբոս աֆաֆես էր խփում, վոր տեղիցս շարժվել չեյի կարողանում: Հանկարծ դուռը բացվեց և դուրս լեկան լերկու հոգի: Հետո ելի մեկը և հրամայեց ցանկապատի մոտ պահակ կանգնել:

— Յես նայեմ, թե ելի ով կա եստեղ...—ասաց նա և դնաց դեպի ափը։ Յերկուսը բոլորովին մոտեցան ինձ։ Յես չեյի համարձակվում բարձրանալ և ընկած եյի, մեռածի պես։ Յերը գլուխս բարձրացրի, տեսա, վոր առաջս մայրիկս և կանգնած։ Յերկու քայլի վրա, նրա կողքին՝ հրացանը ձեռքին—մի ժանդարմ։ Մեկը ներս մտավ, ճրագ վառեց և ճրագը ձեռքին կրկին դուրս յեկավ, դնաց դեպի ափը։ Յես նայեցի մայրիկիս և զգացի, վոր նրան կտանեն ինձնից, վոր յես կորցնում եմ նրան... Կատվի նման հարձակվեցի, մեջքը դեպի ինձ կանգնած ժանդարմի վրա, և ճչացի այնքան բարձր, վորքան կարող եյի։

— Մայրիկ։ Փախիր... փախիր...


Յես տեսա, թե մայրիկս ինչպես բարձրացրեց գլուխը և նայեց իմ կողմը։ Հետո յես կպա ժանդարմի ձեռքին, կծեցի։ Նրա հրացանը գետին ընկավ։ Նա ամեն կերպ թափ եր տալիս ինձ։ Ինչ վոր ծանր բանով խփեց ինձ, Մեկն ել մոտեցավ։ Յերկու անգամ կրակեցին. դեպի այն կողմը, ուր մայրիկս փախավ։ Մեկը կրունկը դրեց ինձ վրա...»։


Սենյակում լռություն տիրեց։

Ժուժայի կարմրած դեմքին փայլում եյին մեծ սև աչքերը։ Յերկու կինն ել շունչները պահած—լսում եյին։

— Նստես ընկա յես եստեղ...

Նրա փոքրիկ բերանը ծամածռվեց ու նա սկսեց կամաց լաց լինել, — չե՞ վոր նա միայն մի տասնուչորս տարեկան փոքրիկ աղջիկ եր։





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038277

История одной венгерки

A 3827



~~9166 б 25 407~~

[— 204.]